

Դանիել Վարուժան

Կալերու գիշեր

Ամարվան քա՛ղցր գիշեր, գլուխը կամին վրա դրած՝
Աշխատանքի սուրբ Ոգին Կալերուն մեջ կը նընջե:
Կը լողա մեծ Լռությունն աստղերուն մեջ ծովացած:
Անհունը՝ բյուր աչքերու թարթափով՝ գի՛ս կը կանչե:

Կ'երգեն, հեռուն, ծղրիդներ: Ջուրերուն մեջ լըճակին
Կ'ըլլա հարսնիք մը ծածուկ նայադներու՝ այս գիշեր:
Սյուքն հուզելով ուռենին ափերուն վրա գետակին՝
Կ'արթընցընե անծանոթ լարերու վրա նըվագներ:

Ծոթրիններու բույրին մեջ, պառկած կատարը դեզին՝
Ես կը թողում որ սըրտիս դըպչի ամեն մեկ ճաճանչ.
Ու կ'արբենամ գինիովն Անհունի մեծ կարասին՝
Ուր կը ճըմլվին ասուպներ քայլի մը տակ անճանաչ:

Չե՛շտ է մըտքիս ընկըղմիլ կապույտին մեջ լուսալիք,
Նավաբեկիլ – թե հարկ է – կըրակներուն մեջ վերին.
Գըտնել աստղեր նորանոր, կորսըված հի՛ն հայրենիք՝
Ուրկե ինկած հոգիս դեռ կու լա կարոտն եթերին:

Վերանալ քա՛ղցր է ինծի թևերուն վրա լըռության,
Լըսել միա՛յն Միջոցին շընչառությունն անխըռով,
Մինչև աչքերըս գոցվին քունի մը մեջ դյութական,

Ու կոպերուս տակ մընաս Անհունը իր աստղերով:

Ա՛յսպես, ա՛յսպես կը նընջեն գյուղին մարդիկը ամեն.
Հոտաղն է իր սայլին վրա, վերմակին տակ լուսածոր,
Հարսն է դեզի կատարին՝ ծոցը բացված գեփյուռեն՝
Ուր կը պարպե Հարդգողն իր կաթը սափոր առ սափոր:

Եվ այսպես՝ օր մը պառկած՝ փողփողումին տակ երկնի,
Իմ ծընողներըս մըշակ՝ գիս հըղացան կաթոգին,
Ջիս հըղացա՛ն սևեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենեն մեծ Աստղին, ամենավառ Հըրայրքին: